ՍԵՌԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԼԱՏՈՆԻ ԵՎ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ԿՈՂՄԻՑ

ԳԱՍՊԱՐ ԱՎԱԳՅԱՆ
Փիլ. գիտ. թեկնածու
ԵԳՊԱ դոցենտ

Մարդու էության ու կոչման փիլիսոփայական մեկնություններում իրենց մեծ ներդրումն ունեն ականավոր մտածողներ Պլատոնն ու Արիստոտելը, որոնց ժառանգությանն ենք անդրադառնում՝ փորձելով նոր լուծումներ գտնել մերօրյա խնդիրներին: Այսօր խիստ հրատապ է սեռադերային հիմնախնդիրը: Այն վերածել է միջազգային սոցիոմշակութային ու իրավաքաղաքական նշանակալի երևույթի[1]:

Սեռերի խնդիրները հին հունական փիլիսոփայության մեջ շաղկապված են կրոնադիցաբանական գաղափարների հետ: Հունական դիցարանում կանանց մեծ տեղ ու դեր էր վերապահված. աստվածների օլիմպիական խորհրդում Հերան ձգտում էր իր կարծիքը հիմնավորել, հաճախ ընդդիմանում էր Զևսին, վրեժխնդիր լինում Զևսից՝ իրեն դավաճանելու համար: Աթենասը, Ափրոդիտեն, Թեմիսը, Արտեմիսը կարևորագույն աստվածուհիներ էին և ոչնչով չէին զիջում արական աստվածներին: Ապոլոնի բոլոր ինը մուսաները՝ Կալիոպեն՝ էպիկական պոեզիայի մուսան, Էրատոն՝ սիրային երգերի մուսան, Էվտերպեն՝ լիրիկայի մուսան, Մելպոմենեն՝ ողբերգության մուսան, Թալիան՝ կատակերգության մուսան, Տերպսիքորեն՝ պարերի մուսան, Կլիոն՝ պատմության մուսան, Ուրանիան՝ աստղաբաշխության մուսան, Պոլիհիմնիան՝ սրբազան հիմների մուսան, ևս պատկանում էին կանանց սեռին: Բայց աստվածների հայրը ամենազոր Զևսն էր: Նա շարունակ դավաճանում էր կնոջը, մինչդեռ Հերան զրկված էր անգամ խանդելու իրավունքից և որպես պատիժ՝ ոսկյա շղթաներով էր կաշկանդված[2]: Այս աշխարհընկալումն արտացոլվում էր սոցիալական կյանքում: Աթենական պետահիրավական համակարգը կնոջ համար սահմանում էր որոշ քաղաքական ու քաղաքացիական իրավունքներ: Կանայք պետության քաղաքացիներ էին և մինչև Տրոյական պատերազմն անգամ ունեին ընտրելու իրավունք, որից զրկվեցին ընտրությունների նկատմամբ «անպատասխանատու վերաբերմունքի» պատճառով: Աղջիկները տղաների նման իրավունք ունեին կրթություն ստանալ, սակայն որոշ դասընթացներ չէին ուսումնասիրում, կամ դրանց ուսուցումը տարվում էր տնային պայմաններում: Նրանց սովորեցնում էին նաև ջուլհակություն, պար, երաժշտություն, տարբեր տնային գործեր: Կինը հին հունական մշակույթում արժանանում էր մեծ հարգանքի ու գնահատանքի, բայց շատ իրավունքնե-

ից զուրկ էր: Այսպես, տղամարդու համար ամուսնալուծությունն ազատ էր, կնոջ համար՝ խնդրահարույց: Կինը չուներ կտակելու իրավունք, իսկ դուստրերը միայն տղաների բացակայության դեպքում էին ժառանգում հոր ունեցվածքը: Կինն անձամբ դատարան դիմելու իրավունք չուներ, և նրա փոխարեն դա անում էր տան գլխավորը: Տանը կանանց հարկաբաժինն առանձին էր, և նրանք տնից դուրս էին գալիս միայն ստրկուհու ուղեկցությամբ (հսկողության ներքո): Ընտանիքի և հասարակության մեջ կանանց վերաբահված էր վերարտադրողական և նոր սերնդի դաստիարակության գործառույթ՝ ինչպես ընդունված է նահապետական ընտանիքում: Ու չնայած որոշ պոլիսներում (օրինակ՝ Սպարտայում) կինն անհամեմատ ազատ էր, կարող էր անգամ արտամուսնական կապեր ունենալ այլ տղամարդու հետ, երեխա ունենալ և հասարակության կողմից ընդունելության արժանանալ[3], սակայն դա Հունաստանի համար ավելի շուտ բացառություն է, քան օրինաչափություն: Ինչպես ողջ իրականությունը, այնպես էլ հասարակությունն անտիկ աշխարհում ուներ հիերարխիկ կառուցվածք, և այն չի շրջանցում կնոջը: Այսպիսին էր Հունաստանը Պլատոնի ու Արիստոտելի ապրած դարաշրջանում, և նրանք փորձում էին գտնել պետական-հասարակական կեցության կազմակերպման կատարյալ ձևեր և դրանցում տղամարդու և կնոջ կոչմանն առավել համապատասխանող դերեր:

Սեռերի խնդիրներին Պլատոնն անդրադառնում է իր մի շարք երկերում: *Խնջույք* երկխոսության մեջ պատմվում է մի լեգենդ՝ տղամարդկանցից և կանանցից զատ գոյություն ունեցած անդրոգինների սեռի մասին, որոնք իրենց մեջ միավորում էին երկուսին: Օժտված լինելով ահռելի ուժով՝ անդրոգինները աստվածների դեմ դավ են նյութում, ուստի Զևսը կարգադրում է նրանց մեջտեղից կիսել՝ խոստանալով ևս մեկ անգամ կիսել, եթե չհնազանդվեն: Այդ պահից ի վեր մարդկանց երկու կեսերը ձգտում են վերագտնել իրենց նախկին ամբողջականությունը՝ այլոց մեջ փնտրելով իրենց կորցրած մասը[4]: *Օրենքներ* և *Պետություն* երկերում Պլատոնն առաջադրում է իդեալական պետության մեջ կանանց ու տղամարդկանց հավասարության գաղափարը և պնդում, որ «պահապան» խավի կանայք պետք է դաստիարակվեն ինչպես տղամարդիկ, ստանան գիտելիքներ պոեզիայից, երաժշտությունից, մաթեմատիկայից, փիլիսոփայությունից, զբաղվեն մարմնակրթությամբ: Նա մտահոգվում է, թե արդյոք դա չի՞ հանգեցնի կանացիության անորսալի, գրավիչ, առանձնահատուկ հատկանիշի կորստյան կամ նրանից չի՞ խլի նրա լավագույն զարդն ու հովանին՝ ամոթը, ու նրան մղի անբարոյականության ու սանձարձակության ուղին: Բայց իսկույն հեգնանքով առարկում է, որ նման պնդումներն արդյունք են նախապաշարումների, որոնք կհաղթահարվեն: Իսկ մարմնակրթությամբ զբաղվելու համար կնոջ մերկանալու անհրաժեշտության առիթով նկատում է, որ շատ տխուր կլիներ, եթե

կանացի բարոյականությունը պաշտպանվեր միայն հագուստով, և միանգամայն հնարավոր էր համարում առաքինությունը որպես հագուստ, որպես կնոջ անաղարտության դեմ ոտնձգություններից պաշտպանվելու զրահ օգտագործելը, ուստի «պետք է հանդես գալ բարքերի դաժանության դեմ»[5]: Նա գտնում է, որ կինն ու տղամարդը իրենց բնույթով կարող են մասնակցել բոլոր գործերին, թեև «կինը ամեն ինչում տղամարդուց ունակ չէ»[6]: Փիլիսոփան հասկանում է, որ կանանց ու տղամարդկանց կենսաբանաանատոմիական յուրահատկություններն ինքնին չեն կարող հիմք հանդիսանալ նրանց իրավունքների ու գործունեության ոլորտների կտրուկ տարանջատման համար և բերում է մի փաստարկ, ըստ որի՝ ճաղատությունը կամ դրա բացակայությունը հիմք չի տալիս մեզ դատելու մարդու իմաստության կամ արիության մասին: Նույնն է կնոջ մանկածնության գործառույթը, ուստի այս կամ այն գործունեությամբ զբաղվելը պայմանավորված է ոչ թե մարդու սեռային հատկանիշով, այլ՝ նրա ունակություններով: Պլատոնը գտնում է, որ իր առաջարկած օրենքը լիովին համապատասխանում է բնության պահանջներին, այն ոչ անհնարին է և ոչ էլ՝ ֆանտաստիկ, իսկ գոյություն ունեցող կարգը բնական իրավունքի ոտնահարում է: Այսինքն՝ կինն օժտվում է լայն իրավունակությամբ, բայց նա այդ դեպքում պետք է ազատ լինի ընտանեկան հոգսերից: Ճիշտ է, Պլատոնը որոշ վերապահումներ թույլ է տալիս. ոչ բոլոր կանայք պետք է դառնան «պահապաններ», կանանց պետք է քիչ ծանրաբեռնել, առաքինի կինը պետք է պատշաճ մակարդակով հոգա տան հոգսերը, աշալրջորեն պահպանի ունեցվածքը և հնազանդ մնա ամուսնուն[7]: Նա կնոջ հանդեպ սերը համարում է կենդանական զգացմունք՝ պայմանավորված բազմանալու անհրաժեշտությամբ, իսկ *Թիմեոս* աշխատության մեջ, ներկայացնելով հոգիների փոխադրման մասին ուսմունքը, ընդգծում է, որ վախկոտ ու անազնիվ տղամարդկանց հոգիները նրանց մահվանից հետո փոխադրվում են կանանց մեջ[8]: Խոսելով պահապանների մասին՝ Պլատոնը հանգում է այն մտքին, որ նա, ով դաստիարակված է հասարակությանը անմնացորդ ծառայելու ոգով, ով չունի տուն, սեփականություն, անձնական կյանք, չպետք է ունենա և ընտանիք:

Արիստոտելն այս հարցում այլ դիրքորոշում ունի: Նա գտնում է, որ «յուրաքանչյուր պետություն բաղկացած է առանձին ընտանիքներից»[9], և որ ինչպես պետության մեջ, այնպես էլ ընտանիքում պետք է տիրեն իշխելու-հպատակվելու հարաբերություններ: Ըստ նրա՝ ամեն կենդանի էակ բաղկացած է հոգուց և մարմնից. նրանց միջև բնական հարաբերությունն այնպիսին է, որ հոգին իշխում է, մարմինը՝ ենթարկվում, իսկ դրանց միջև հավասարությունը կամ հակադարձ հարաբերությունը վտանգավոր է[10]: Արդ, նույնն է նաև տղամարդու և կնոջ կապը՝ «առաջինն իր բնույթով բարձր է, երկրորդը գտնվում է նրա ենթակայության

ներքո»[11]: Նա ընտանիքը համարում է ամենօրյա պահանջմունքների բավարարման համար բնական ճանապարհով տղամարդու և կնոջ միջև ձևավորված հաղորդակցություն, որի առաջացումը կախված չէ գիտակցական որոշման հետ և հետապնդում է սերունդը շարունակելու նպատակ: Սեռերի գոյությունը Արիստոտելը բացատրում է այն հանգամանքով, որ հոգին և մարմինը տարբեր իրողություններ են, հոգին բարձր և աստվածային գոյ (սուբստանց) է, իսկ մարմինը՝ ցածր, նյութական[12]: Ընդունելով հանդերձ, որ պետությանն անհրաժեշտ են արժանավոր կանայք, նա սակայն նշում է, որ «*կանանց դրության չափազանց արտոնյալ լինելը դառնում է վնասակար պետական կարգի հետապնդած գլխավոր նպատակի տեսանկյունից: Այն չի ծառայում պետության բարեկեցությանը*»[13]:

Այսպիսով, սեռերի խնդիրը Պլատոնն ու Արիստոտելը մեկնաբանում են տարբեր կերպ: Առաջինը կարևորում է սեռերի իրավահավասարությունը, երկրորդը՝ սոցիալական հիերարխիկ համակարգում տղամարդուց կնոջ կախվածությունը:

1 Տե՛ս Պեկինյան հռչակագիր և գործողությունների ծրագիր (1995 թ.), Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա (1954 թ.), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (1979 թ.) և դրա Կամընտիր արձանագրություն (1999 թ.), ԵԽ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա (2011 թ.), ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր (2000 թ.):

2 Ն.Կուն, *Հին հունական լեգենդներն ու առասպելները*, Եր., 1956, էջ 37:

3 Ю. Андреев. «Спартанская гинекократия», *Женщина в античном мире*: Сб. статей. - М.: Наука, 1995, стр. 57.

4. Платон. *Пир*, Собр. соч. в *четырех томах*, том 2, М., 1993.

4 Платон. *Соч. в 3 томах*, том 3 (1), М., 1971, стр. 251.

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում, էջ 253:

8 Платон. *Тимей*, Собр. соч. в *четырех томах*, том 3, М., 1994.

7 Аристотель, *Соч. в четырех томах*, том 4, М., 1984, стр. 380.

8 Նույն տեղում, էջ 382-383:

9 Նույն տեղում, էջ 383:

10 Аристотель, *О возникновении животных*, М., Л., 1940, стр. 90-91.

11 Аристотель, *Соч. в четырех томах*, том 4, М., 1984, стр. 428-429.

PHILOSOPHICAL INTERPRETATION OF THE SEXES BY PLATO AND ARISTOTLE.

GASPAR AVAGYAN
Doctor of Philosophy
Associate professor at YAFA

The problem of sex ratio is interpreted in different ways by Plato and Aristotle. Attitudes towards women in Plato was twofold. Compared with a man he considered a woman an inferior being, as cowardly and dishonest souls of men pass into the bodies of women after death. On the other hand, in a perfect state women could participate in all the affairs of the state on an equal basis with men. According to Aristotle, a man and a woman are not equal beings, a man is above, a woman is below by nature. Therefore, the husband dominates, the wife obeys. The only meaning of separation of the sexes is - the birth of children, and the appointment of women-nurturing offspring and doing the house. A husband and a wife have different responsibilities in the family,and they do not interfere in each other's affairs.

ФИЛОСОФСКАЯ ИНТЕРПРЕТАЦИЯ ПОЛОВ ПЛАТОНОМ И АРИСТОТЕЛЕМ.

ГАСПАР АВАГЯН
Кандидат философских наук
Доцент ЕГАХ

Проблема соотношения полов Платоном и Аристотелем трактуется по разному. Отношение к женщине у Платона было двояким. По сравнению с мужчиной, он считал женщину низшим существом, так как души трусливых и бесчестных мужчин после смерти переходят в тела женщин. С другой стороны, в идеальном государстве женщина могла наравне с мужчиной участвовать во всех делах государства. По мнению Аристотеля мужчина и женщина не равные существа, мужчина выше, женщина - ниже по своей природе. Поэтому муж властвует, жена - подчиняется. Единственный смысл разделения полов - рождение детей, а назначение женщины - вынашивание потомства и ведение хозяйства. В семье у мужа и жены разные обязанности, и они не вмешиваются в дела друг друга.